

Արձանագրություն

Երևանի պետական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2011թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած թիվ 13 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 74-ը (յոթանասունչորս):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Ղոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում:**
(Ձեկ.՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Հ. Պետրոսյան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան)
2. **Տեղեկատվություն ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի 2011-2012 ուստարվա ընդունելության մասին:** (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
3. **Տեղեկատվություն ԵՊՀ ասպիրանտների և հայցորդների 2011թ. ընդունելության մասին:** (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
4. **Տեղեկատվություն 2010-2011 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մասին:** (Ձեկ.՝ պրոռեկտորի տեղակալ, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
5. **ԵՊՀ մշակույթի կենտրոնի 2010-11 ուստարվա գործունեության հաշվետվություն:** (Ձեկ.՝ կենտրոնի տնօրեն Կ. Ա. Դավթյան)
6. **ԵՊՀ ՌԻԳԸ 2010-11 ուստարվա գործունեության հաշվետվություն:** (Ձեկ.՝ Կ. Գ. Խաչատրյան)
7. **Համշենցիները Թուրքիայում. ժողովրդագրական և բարբառագիտական ակնարկ:** (Ձեկ.՝ բ.գ.թ. Լ. Ս. Սահակյան)
8. **Ընթացիկ հարցեր:**

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար նոր հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Նիստի մասնակիցները **լսեցին** ղոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին ղոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1. Հարությունյան	Ռուսաց լեզվաբանության,	Բանասիրական գիտ. դոկտոր /2008/ Ժ.02.03

	Վերոնիկա Նիկիտայի	տիպաբանության և հաղորդակցման տես. ամբիոնի դոցենտ	– համեմատական և տիպաբանական լեզվաբանություն, դոցենտ
2.	Գաբուզյան Արա Հարությունի	Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ	Իրավաբանական գիտ. դոկտոր /2008/ ԺԲ.00.05 – քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք, դոցենտ
3.	Խաչիկյան Հարություն Մարտինի	Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ	Իրավաբանական գիտ. դոկտոր /2008/ ԺԲ.00.05 – քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք, դոցենտ

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Գաբրիելյան Վարուժան Պարտիզունու	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ	Ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2004/ Ա.01.09 – մաթ. կիրառական տրամաբանություն
2.	Թադևոսյան Հմայակ Տիգրանի	Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի ասիստենտ	ՀՀ վաստակավոր մարզիչ, քիթ-բոքսինգի միջազգային կարգի մրցավար, մրցավարական խորհրդի ղեկավար

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 74 անդամները: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Ջաքարյան Սեյրան Արտյուշայի (նախագահ), Հակոբյան Լևոն Գեորգիի, Մինասյան Ռոբերտ Սարիբեկի, Գրիգորյան Անի Արշակի, Մարգարյան Ալեքսանդր Նելսոնի:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հարությունյան Վերոնիկա Նիկիտայի	71	2	1
2.	Գաբուզյան Արա Հարությունի	66	7	1
3.	Խաչիկյան Հարություն Մարտինի	67	5	2

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գաբրիելյան Վարուժան Պարտիզունու	55	19	0
2.	Թադևոսյան Հմայակ Տիգրանի	50	24	0

Որոշեցին. - 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար:

2. Գիտխորհրդի անդամները **լսեցին** ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի 2011-2012 ուստարվա ընդունելության մասին տեղեկատվությունը: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):

Արտահայտվեցին.- Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Ս. Սեդրակյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին.**- ԵՊՀ ասպիրանտների և հայցորդների 2011թ. ընդունելության մասին տեղեկատվությունը: (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):

Արտահայտվեցին.- օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան Լ. Ա. Շեկյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը, հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ա. Ավագյանը, անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Բ. Գասպարյանը, տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Հ. Ա. Ազգալոյանը:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.**- 2010-2011 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) մասին տեղեկատվությունը: (Զեկ.՝ պրոռեկտորի տեղակալ, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան Լ. Ա. Շեկյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը, ՈԻԽ նախագահ Յ. Ա. Ակոպյանը:

Որոշեցին.- 4.1. ընդունել ի գիտություն:

4.2. Նկատի ունենալով բանակից զորացրված ուսանողների թվի աճը համալսարանում՝ դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ թույլատրել ՀՀ կառավարության կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդներին հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողներին՝ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրել միայն ուսումնառության առաջին տարում, իսկ դրանից հետո նրանց ուսանողական նպաստների հատկացումը կատարել մրցութային կարգով, որը կիրականացվի ընդհանուր հիմունքներով բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված և պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողների միջև:

4.3. Դիմել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ փոխատեղման մրցույթը ըստ մասնագիտացումների կազմակերպելու առաջարկով:

5. **Լսեցին.**- ԵՊՀ մշակույթի կենտրոնի 2010-11 ուստարվա գործունեության հաշվետվությունը: (Զեկ.՝ կենտրոնի տնօրեն Կ. Ա. Դավթյան):

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյանը, Հայոց պատմության ամբիոնի վարիչ Բ. Հ. Հարությունյանը, ՈւԽ նախագահ Յ. Ա. Ակոպյանը:

Որոշեցին.- Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.**- ԵՊՀ ՈԻԳԸ 2010-11 ուստարվա գործունեության հաշվետվությունը: (Զեկ.՝ Կ. Գ. Խաչատրյան):

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը, հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ա. Ավագյանը, պատմության ֆակուլտետի դեկան Է. Գ. Մինասյանը:

Որոշեցին.- 6.1. Ընդունել ի գիտություն:

6.2. Երաշխավորել ասպիրանտների և հայցորդների՝ 2010-11 ուս. տարվա ՈԻԳԸ կոնֆերանսների շրջանակներում ներկայացված հոդվածները համալսարանի գիտական հանդեսներում հրատարակելու համար:

6.3. Հիմք ընդունելով համապատասխան ֆակուլտետների գիտխորհուրդների դրական կարծիքները 2010-11 ուս. տարվա ՈԻԳԸ ժողովածուում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հոդվածները տպագրելու հարցում՝ երաշխավորել ՈԻԳԸ ժողովածուն հրատարակելու համար:

7. ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լ. Ս. Սահակյանի՝ <<Համշենցիները Թուրքիայում. Ժողովրդագրական և բարբառագիտական ակնարկ>> խորագրով գիտական զեկուցումը, ժամանակի սղության պատճառով որոշվեց հետաձգել գիտխորհրդի հաջորդ նիստին:

8. **Լսեցին.**- ընթացիկ հարցեր:

8.1. **Լսեցին.**- Մոսկվայի պետական համալսարանի օտար լեզուների և տարածաշրջանային ուսումնասիրությունների ֆակուլտետի՝ դեկան Սվետլանա

Տեր-Մինասովային ՌԴ գիտության վաստակավոր գործչի կոչման ներկայացնելու վերաբերյալ որոշմանը ԵՊՀ գիտխորհրդի կողմից աջակցություն հայտնելու մասին:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Ա. Աբրահամյանը, անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Ք. Գասպարյանը:

Որոշեցին.- Հաշվի առնելով Ս. Գ. Տեր-Մինասովայի պատկառելի ներդրումը հումանիտար գիտությունների այնպիսի գիտակարգերի զարգացման մեջ, ինչպիսիք անգլիստիկան է, միջմշակութային հաղորդակցությունը, օտար լեզուների դասավանդման մեթոդիկան և այլն, հիմք ընդունելով նաև ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի դրական կարծիքն այս հարցում՝ աջակցություն հայտնել Ս. Գ. Տեր-Մինասովային ՌԴ գիտության վաստակավոր գործչի կոչմանը ներկայացնելու մասին ՄՊՀ-ի օտար լեզուների և տարածաշրջանային ուսումնասիրությունների ֆակուլտետի գիտխորհրդի որոշմանը:

8.2. Լսեցին.- ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ալեքսանդր Վիլենի Սաֆարյանի «Ձիյա Գյոքալփը և թուրքականության հիմունքները» մենագրությունը հրատարակման երաշխավորելու մասին:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը (մենագրության խմբագիր), արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Վ. Մելիքյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը և մենագրության հեղինակ Ա. Վ. Սաֆարյանը:

Որոշեցին. – Հաշվի առնելով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի և թուրքագիտության ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև աշխատության հույժ արդիականությունը, կատարման բարձր որակը՝ ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանի «Ձիյա Գյոքալփը և թուրքականության հիմունքները» մենագրությունը երաշխավորել հրատարակման:

Նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտքարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան